թեամբ: Մեր ժողովուրդը մի քանի խելագարների պատճառով կասկածաւոր է դառնում կառավարութեան աչքում:

— Միթէ՞ կայ հայերի մէջ այդ տեսակ երիտասարդութիւն, — հարցրեց Ասլանը զարմացած կերպով:

— Դժբախտաբար կայ, բայց դեռ նոր է ծնւում, դեռ նոր է կազմակերպւում: Բայց թէ՛ ես, որ իմ սուրբ պարտաւորութիւնն եմ համարում, եւ թէ՛ փաշան, որ նոյնքան նախանձախնդիր է այդ գործում, ամէն ջանք պէտք է գործ դնենք, որպէսզի այդ չարիքը քանդենք հէնց իր ծնունդի մէջ:

Ասլանը ոչինչ չպատասխանեց եւ ինձ ներս կանչեց:

— Ասացէք խնդրեմ, սրբազան հայր, — խօսքը փոխեց նա, — ձեր վանքերում չե՞ն գտնւում հին բժշկարաններ, դա ինձ համար, որպէս բժշկի, շատ հետաքրքիր է: Հայոց բժշկարանները, ըստ մեծի մասին թարգմանուած լինելով արաբականից, այժմ արաբերէնի մէջ շատերի բնագիրը կորած է. ես մեծ յոյս ունեմ հայերէն թարգմանութիւնների մէջ գտնել այն կորած գրքերը:

— Գրչագիր բժշկարաններ կարելի է գտնել մեր վանքերում, — պատասխանեց սրբազանը, — ինձ եւս շատ անգամ պատահել է տեսնել: Կարելի է գտնել նաեւ մասնաւոր տներում:

— Ի հարկէ, ձեզ պէտք է յայտնի լինեն այն վանքերը, որոնց մէջ աւելի մեծ թոով գրչագրեր են պահպանել:

— Ինչպէս չէ, բոլորը յայտնի են, օրինակ, Վարագայ վանքը, ծովի մէջ գտնուած երեք կղզիները, որոնց իւրաքանչիւրի մէջ մի-մի անապատ կայ, եւ ուրիշ շատ վանքեր, որոնք գտնւում են իմ վիճակի մէջ:

— Դուք ինձ շատ կը պարտաւորէիք, սրբազան հայր, եթէ կը շնորհէիք ինձ մի թուղթ, որ ձեր թեմի մէջ գտնուած վանքերում, որտեղ կը պատահէր ինձ լինել, ցոյց տային ինձ գրչագիրները: Ես նրանց չէի շարժի իրանց տեղից, բայց եթէ իմ նպատակներին յարմար բան գտնէի, կը խնդրէի, որ արտագրեն ինձ համար:

— Մեծ ուրախութեամբ: Ես կը հրամայեմ հէնց այսօր պատրաստեն այդ թուղթը: Նրա մէջ նշանակուած կը լինեն բոլոր վանքերի անունները, որոնց մէջ գտնւում են գրչադիրները:

— Շատ շնորհակալ եմ, ձեր թուղթը ինձ համար միեւնոյն ժամանակ մի տեսակ ուղեցոյց կը լինի:

Սրբազանը հրամայեց երկրորդ անգամ սուրճ տան եւ կանչեց իր քարտուղարին: